

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ

ՀԿԵ ՓԲԸ-ի թերթ
ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՂԵԿՏԵՄԲԵՐ, 2020

ՀԱՐԳԵԼԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ, ՎԵՏԵՐԱՆՆԵՐ.

Ա ն ց ն ո ղ 2020 թվականը դժվար էր երկաթուղու և Հայաստանի համար: Անցնող տարում հանրապետությունը ստիպված էր դիմակայել ոչ միայն կորոնավիրուսային համաճարակին, որի հետ բախվել էր ամբողջ աշխարհը, տնտեսական դժվարությունների, այլև մասնակցել Արցախյան նոր պատերազմին: Այս ամենը մեծ փորձություն դարձավ ինչպես հայ ժողովրդի համար, որը սովեց իր ողջ ուժն ու հնարավորությունները՝ նյութական, ֆիզիկական, բարոյական, այնպես էլ երկաթուղու աշխատողների համար, ովքեր, ինչպես և միշտ, անտարբեր չմնացին: Մեր աշխատակիցները մեկնում էին առաջնագիծ, հավաքում մարդասիրական և նյութական օգնություն, ամեն կերպ աջակցում կարիքավորներին:

Այս տարին, ցավոք, կորուստների տարի էր: Դրանց մի մասն անդառնալի են, բայց այդ կորուստները պետք է վերապրել և առաջ շարժվել՝ աշխատել երկաթուղային ենթակառուցվածքի և երկրի զարգացման համար: Դրա համար մեզ անհրաժեշտ է միասնություն, ընդհանուր աշխատանք՝ ի շահ Հայաստանի: Համոզված են, որ երկաթուղայինների մեծ, միասնական ու ամուր ընտանիքը կրկին նշանակալի ներդրում կունենա մեր ապագա հաղթանակների և նվաճումների մեջ: 2021 թվականը լինելու է համառ և քրտնաջան աշխատանքի տարի, բայց միայն այս աշխատանքը կդառնա հաջողության ճանապարհը:

Ձեզ և ձեր ընտանիքներին անկեղծորեն մաղթում եմ երջանկություն, առողջություն, ուրախություն նոր տարում: Թող 2021 թվականը լինի նվաճումների և նոր բարձունքների, հաջողությունների, բարեկեցության և բարգավաճման ժամանակ:

Հարգանքներով՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ա. Վ. Մելնիկով



ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԵՐԿԱԹԵ ԿԱՄՔԻՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Երևանի երկաթուղային կայարանի կառուցատույց: Ճիշտ ժամանակին կայարան է հասնում Երևան-Գյումրի-Երևան ուղղությամբ աշխատող մերձքաղաքային ԷՊ2Գ էլեկտրագնացքը: Ժամանելուն պես ուղևորները հերթ են շարվում, որպեսզի ուղեկցորդը չափի ջերմաստիճանը մինչ վագոն նստելը: Ի վերջո, կարանտինը շարունակվում է, իսկ դա նշանակում է, որ կանխարգելիչ միջոցառումները պետք է խստորեն պահպանվեն: Քաղաքացիների նման կարգապահությունն ու ճշտապահությունը հաճելիորեն զարմացնում են: Երևանի երկաթուղում այլ կերպ չի լինում:

Քանի որ չվացուցակի համաձայն, էլեկտրագնացքը կայարանից պիտի մեկնի 14:25-ին, մենք դեռ ժամանակ ունեցանք ծանոթանալ մարդու, ով արդեն 40 տարի աշխատում է որպես գնացքի մեքենավար: Ինձ թվում էր, որ երկար տարիներ էլեկտրագնացք վարող մարդը պետք է առնվազն հոգնած լինի առօրյայից: Բայց Հարավկովկասյան երկաթուղու (ՀԿԵ) մարդատար էլեկտրագնացքի մեքենավար Աշոտ Սարգսյանը ժպտալով դիմավորեց մեզ, բավականին թարմ տեսք ուներ, իսկ նրա աշխատանքային ոգուն կարելի էր միայն նախանձել: «Երկաթուղում պատահական հայտնվեցի, բայց երկար մնացի», - կատակից սկսում է մեր ծանոթությունը մեքենավարը:

Հայտնի փաստ է, որ սովորաբար երկաթուղին Հարմարությունը 2-րդ էջ.



տը, դժվար է ասել, սակայն որ նա այստեղ գտել էր իր տեղը, իսկ ուրտը իր տիրույթը, այլ կարծիք չի կարող: Ապացույցը՝ համակարգում նրա շուրջ կենդանի գործունեությունը:

Միջնակարգն ավարտելուց հետո երկաթուղայինի մասնագիտություն ստացած երիտասարդը աշխատանքի է գործուղվել Դոնեցկի երկաթուղու հանգույցներից մեկում՝ օպերատորից հասնելով կայարանապետի պաշտոնի: Մասնագիտության մեջ խորանալու, գիտելիքներն համալրելու ձգտումը նրան տարել է Թբիլիսիի երկաթուղային

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

Հիշենք՝ մեզանում այսպիսի մարդ է եղել Քիչ անց կտեսնենք՝ ինչպիսի մարդ, իսկ մինչ այդ գնանք մի փոքր հեռուն՝ Ղանդիլյան գերդաստանի խորքերը:

Արմատներով Արևմտահայաստանից են՝ մշեցի: Հայրենի բնօրրանից տեղահանված և օտար ափեր քշված հազարավորների հետ այս գերդաստանն էլ տարագիր է դարձել ու հաստատվել Կրասնոդարի մարզի Արմավիր քաղաքում: Հասարակ բանվորի ընտանիքում մեծացող 12 զավակներից մեկին՝ Համբարձումին, ինչո՞վ էր հրապուրել երկաթուղու ոլոր-

տրանսպորտի ինստիտուտ, որն ավարտելով շարունակել է որպես կայարանապետ պաշտոնավարել երկաթուղու Հարավարևելյան, Մերձվոլգյան և Աստրախանի հանգույցներում:

Տեղափոխվելով Հայաստան՝ 1972-ին Համբարձում Ղանդիլյանը նշանակվել է Աստրակովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքի պետ և գլխավորել այն մինչև իր կյանքի վերջը, ու այդ ողջ ընթացքում նրա շուրջ լեգենդներ են հյուսվել, արտասովոր պատմություններ են պատմվել նրա կառավարման ու կազմակերպչական բացառիկ հմտության մասին,

Հարմարությունը 3-րդ էջ.

ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ԵՐԿԱԹԵ ԿԱՄՔԻՆ

ընտրում են երկաթուղայինների ընտանիքներում մեծացածները, բայց Սարգսյանի պատմությունը տարբերվում է ժառանգական երկաթուղայինների ճակատագրից: «Մեր տոհմում մեքենավարներ չկային, մեր հարազատներից ոչ մեկը երբևէ չէր աշխատել երկաթուղում: Բայց դեռ դպրոցական տարիներին ես հասկացա, որ ուզում եմ գնացքի մեքենավար դառնալ: Ժամանակն այդպիսին էր: Ընդունվեցի երկաթուղու տեխնիկում, որտեղ նախկինում կոչվում էին մեր երկաթուղու կադրերը», - ասում է նա:

Երկաթուղում երկամյա պրակտիկայից հետո նրան կանչեցին զինվորական ծառայության: Հատկանշական է, որ բանակում երկու տարի ծառայելուց հետո նրա մտադրությունները չփոխվեցին, և նա վերադարձավ երկաթուղի: Բայց, սահմանված կարգի համաձայն, սկսեց աշխատել որպես մեքենավարի օգնական: 4 տարի աշխատելուց հետո Սարգսյանին վստահվել է բեռնատար գնացքի կառավարումը, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև մարդատար գնացքը:

«Միանգամից մեքենավար չեմ դառնում: Պետք է առնվազն 2 տարի աշխատել որպես մեքենավարի օգնական: Ինչ-որ մեկը այս պաշտոնում մնում է 10 տարի, իսկ երբեմն՝ ցմահ: Ամեն ինչ կախված է նրանից, թե արդյոք մարդը կարողացել է մեքենավարի մասնագիտության համար անհրաժեշտ որակներ ձեռք բերել, պահանջները բավականին բարձր են», - նշեց նա:

Աշտ Սարգսյանի հետ մենք զրուցում էինք կայարաններում կանգառների ժամանակ, քանի որ ինձ զգուշացրել էին, որ էլեկտրագնացքը վարելիս մեքենավարին չի կարելի շեղել: Այնպես որ, երբ էլեկտրագնացքը ճանապարհի ընկավ, ես խոնարհորեն հետևում էի մեքենավարի աշխատանքի ճարտարությանը՝ համեմատելով այդ հեշտությունը շարժակազմի քաշի հետ: Հետևելով փոփոխվող պատկերներին, ինձ թվում էր, որ կամաց-կամաց սկսում եմ հասկանալ երկաթուղու «ռոմանտիկան», որի մասին այդքան հաճախ են խոսում:

Սակայն, այդ ռոմանտիկան հասանելի է միայն ուղևորներին. մեքենավարի ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացվի շարժակազմի կառավարման վրա, ինչը առաջին հերթին ենթադրում է պատասխանատվություն մարդկանց կյանքի համար: «Երբ կողքից ես նայում, թվում է, թե հեշտ է, բայց իրականում դա քրտնաջան աշխատանք է», - կիսվում է մեզ հետ փորձառու մեքենավարը:

Մեր ուղևորությունը շակներից է սկսվում: Կայարանից մեկնելով, Սարգսյանը ողջունեց զուգահեռ գծով շարժվող մետրոյի գնացքը: Մի տեսակ մասնագիտական համերաշխություն է՝ չնայած շարժակազմի դասերի տարբերությանը: Հերթական, բայց արդեն նախագուշակական ազդանշանով, մեր մեքենավարը արձագանքեց երկաթուղային գծերի վրայով վազող մի կնոջը:

«Ցավոք, սա մեզ մոտ սովորական բան է, երբ երեխաները խաղում են ռելսերի վրա, մարդիկ անցնում են երկաթուղային գծերով, կամ ընտանի կենդանիներ են ճանապարհ դուրս գալիս: Եղել են նույնիսկ դեպքեր, երբ երիտասարդները մեքենաներով դուրս էին գալիս գծեր՝ չարձագանքելով նախագուշակական ազդանշաններին: Նման դեպքերում մեքենավարը պետք է գործի ճշգրիտ և գրագետ, նա

միշտ պետք է ունենա մեկ, բայց ճիշտ որոշում: 40 տարվա ընթացքում մի անգամ չի, որ ստիպված եմ եղել արտակարգ արգելափակել: Բայց ցավալին այն է, որ մարդիկ չեն հասկանում, որ գնացքը չի կարող միանգամից կանգնել: Ուստի, ցավոք, մարդկային նման անկարգությունների պատճառով երկաթուղում ՇՏՊ-ները նույնքան անխուսափելի են, որքան մարդկային զոհերը», - ասաց նա:

Էլեկտրագնացքի մեքենավար Սարգսյանի աշխատատեղն այսօր իրենից ներկայացնում է ժամանակակից սարքավորումներով և բազմաֆունկցիոնալ պոլիտով հագեցած կաբին՝ բազմաթիվ մոնիտորներով, անջատիչներով և կառավարման, ավտորոշման և անվտանգության համալիրով: Բացի այդ, էլեկտրաքարշն ունի մեքենավարի առողջական վիճակի ավտորոշման համակարգ, իսկ

ամենակարևորը, երկաթուղում աշխատելու ցանկություն: Առանց ցանկության ոչինչ չի ստացվի», - ասում է մեքենավարը:

Միթե, երբեք չեք ցանկացել փոխել այս հորիզոնները կամ գնալ այլ երկիր: «Ան այսօր ես նման միտք չեմ ունեցել, - նկատում է երկաթուղայինը: - Եվ հայրենիքը երբեք չի կարող ձանձրացնել, ընդհակառակը, հանդարտեցնում է»:

Ջրույցի համար քիչ ժամանակ էր մնացել, մենք պեք է իջնեինք Արմավիրի կայարանում, այնպես որ զրույցի ավարտին հասցրեցի հարցնել միայն բեռնատար և ուղևորատար գնացքների կառավարման տարբերության մասին: Ինչին նա պատասխանեց, որ շարժակազմի նպատակային տարբերությունից ելնելով՝ յուրաքանչյուրի կառավարումն ունի իր դժվարություններն ու առանձնահատկությունները:



SCR OJSC / HARUTYUN NAZARYAN

նորմայից որևէ շեղման դեպքում դա ակնթարթորեն ազդարարում է դրա մասին:

«Եթե ուշադրությունս շեղվում է, համակարգը անմիջապես արձագանքում է», - ծիծաղում է նա՝ ցույց տալով դաստակին ամրացված սենսորը: Իսկ եթե, օրինակ, մեքենավարի ճշումը իջնում է, անվտանգության նկատառումներից ելնելով, շարժակազմը կարող է նույնիսկ կանգ առնել:

Սակայն, ինչպես խոստովանում է մեր զրուցակիցը, տեխնոլոգիական զարգացումը որևէ կտրուկ փոփոխություն չի մտցրել նրա աշխատանքում, և նա չի հիշում աշխատանքի հետ կապված դժվարություններ Խորհրդային Միության ժամանակներում: «Այո, որոշ ժամանակ պահանջվեց նոր տեխնիկային սովորելու համար: Բայց մեզանից, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, պահանջվում է բարձր կարգապահություն և տեխնիկայի նկատմամբ զգուշավորություն: Չնայած իր ամբողջ կառուցվածքին, տեխնիկան շատ զգայուն է: Այս աշխատանքը պահանջում է նաև լավ առողջություն և,

«Մարդկանց հետ պատասխանատվությունն ավելի բարձր է», - կրկին հիշեցրեց իր և պատասխանատվության մասին մեքենավարի օգնականը: Նրա ղեկավարը չհակասեց նրան, բայց հանգիստ շարունակում էր մանևրել՝ նայելով իրեն ծանոթ հորիզոններին: Իսկ ինձ չէր թողնում այս անսասանության և մասնագիտության հանդեպ նվիրվածության հանդեպ հարգանքի զգացումը:

Ինչպես և պայմանավորվեցինք, մենք հրաժեշտ տվեցինք նրանց Արմավիրի երկաթուղային կայարանում: Բայց Երևան վերադառնալուց պես ես հասկացա, որ եթե նույնիսկ չհասցրեցի մեքենավարին բոլոր հարցերը տալ, մի բան ինձ համար ակնհայտ դարձավ այս ճանապարհորդությունից հետո: Հավանաբար, սա ամենակարևորն է, ինչը պետք է իմանալ այս մասնագիտության մասին. երկաթուղին ենթարկվում է միայն երկաթյա կամք ունեցող մարդկանց, ինչպիսին է էլեկտրագնացքի մեքենավար Աշտ Սարգսյանը:

ArmlInfo

2020 թվականի 44-օրյա Արցախյան պատերազմն արդեն անվանում են Երկրորդ Արցախյան: Այն արդեն ամուր մտել է հասարակ մարդկանց կյանք: Այս պատերազմը դարձավ հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը, երբ մեր ժողովուրդը կրկին անգամ ստիպ-

ԱՄԲՈՂՋ ԿՈՆԵԿՏԻԿՈՎ



ված էր պայքարել իր գոյության և պետության համար: Այս պայքարին, ինչպես միշտ, մասնակցում էին երկաթուղայինները: Մասնակցում էին ֆինանսապես՝ ակտիվորեն միջոցներ փոխանցելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշիվներին, հումանիտար օգնություն հավաքեցին արցախցիների համար, մասնակցեցին անձամբ՝ մեկնելով առաջնագիծ:

Հարավկովկասյան երկաթուղու 174 աշխատակից կամավոր կամ զորակոչով մեկնել է Արցախ: Նրանցից շատերը պատերազմում նորեկներ չեն. 109 երկաթուղայիններ մասնակցել են 2016-ի ապրիլյան պատերազմին, իսկ 94-ը Արցախյան առաջին ազատամարտի վետերաններ են:

Պատերազմն անհնար է առանց կորուստների: Երկաթուղու 10 աշխատակից վիրավորվել են, մեկը՝ զոհվել: Ամառահացածը Սումբուլյան Սամվել Թովմասին է, «ՀԿԵ» ՓԲԸ Երևան - թիվ 1 թիմի ղեկավարի տեղակալն է:

Երկու երեխաների 51-ամյա հայրը երկաթուղում աշխատել է 2005 թվականի սկզբից: Եղել էր հրաձիգ, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ - «Ուղեմասի պահպանության» ջոկատի ղեկավար, այնուհետև թիմի պետի տեղակալ և պետ, Անվտանգության ծառայության Մասիսի և Երևանի թիվ 2 և թիվ 1 թիմերի պահակախմբերի պետ:

Մեր ցավակցությունները Սամվել Սումբուլյանի հարազատներին և մտերիմներին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

Ի շահ գործի՝ անկարելին հնարավոր դարձնելու նրա արտասովոր հունարի մասին: Իսկապես, դա հունար էր, յուրահատուկ կարողություն, որ կարելի է դանդիլյանական առանձնաշնորհ համարել, որի շնորհիվ էլ Հայաստանի տրանսպորտային այս կարևոր կապուղին՝ երկաթուղին, երկրի օրհասական ու ծանրագույն պայմաններում գործեց անխափան: Եվ պատահական չէր, որ նրա օրոք երկաթուղային տրանսպորտը մեզանում բուռն զարգացում ապրեց. էլեկտրաֆիկացվեց ու ավտոմատացվեց ողջ համակարգը, կառուցվեցին նոր երկաթուղագծեր, բարենորոգվեց եղածը:

Ինչպիսի՞ տիտանական աշխատանք կատարվեց 1988-ի աղետալի երկրաշարժին հաջորդած ժամանակշրջանում: Ղանդիլյանի անմիջական ջանքերով և օրնիբուն հսկողությամբ ու հետևողականությամբ երկաթուղին շատ արագ վերականգնվեց՝ ապահովելով տարբեր հանրապետություններից Հայաստան ուղարկվող բեռների փոխադրումն ու բեռնաթափումը: Նրա կողմից հաստատված դրվածքի՝ կարգուկանոնի, պահանջկոտության, պատասխանատվության և անձնապես այդպիսին լինելու շնորհիվ էր, որ համակարգն հստակ գործեց նաև 90-ականների ոչ սակավադեպ դիվերսիոն պայթեցումների պայմաններում, երբ վթարված հատվածները վերականգնվում էին հնարավորինս կարճ ժամանակամիջոցում: Անձամբ էր հսկում աշխատանքը, 24 ժամ կայարանում էր, օրերով տան երես չէր տեսնում: Հնուտ բանակցող էր, դիվանագիտություն խաղալ գիտեր, շրջափակման ծանր


Հայրենասեր մարդ էր, երկրի շահը կարևորող: Նրան չէին մերժում. մի կարճ

զանգ, երկու խոսք, և հարցը կարգավորված էր: Ուրիշ կերպ չէր լինում՝ Ղանդիլյանն էր ասողը:

Սովետի կոմիվածքի մարդ էր, օրենքի մարդ, օրենքը հարգող ու պահպանող, պարտաճանաչ էր ու խստապահանջ, որ երբեմն կարող էր կոպտության հասնել, բայց այդ կոպտության տակ զգայուն հոգի կար, մարդու նկատմամբ արտացավություն ու բարություն;

Ու բոլորը ենթարկվում էին այդ խստությանը, չէին տրտնջում, ըմբռնում էին ու տանում: Որքան էլ անզիջում էր աշխատանքում թերացումների, անպատասխանատվության դեմ, թերացողին երբեք «զեռնով չէր տա», երեսին ամենայն խստությամբ ամեն ինչ կասեր, բայց չէր վնասի, ինչպես ասում են՝ «հացից չէր կտրի», մարդկայնորեն կօգներ ուղղվել: Նեղն ընկածն առանց երկմտելու կղիներ նրան: Նեղյալին, իր օգնության կարիքն ունեցողին անպատասխան չէր թողնի, կգտներ օգնելու ձևն ու միջոցը: Դա նրա մարդկային նկարագրի էական և ամենաբնորոշ դիմագիծն էր: Մարդուն ձեռք մեկնելու համար, ինչպես գյումրեցին կասեր՝ մի հատ էր: Նրա կողմից մշտապես մեծ ուշադրության են արժանացել աշխատողների բարեկեցության խնդիրները: Որդին պատմում է, թե հաճախ էր հատուկ գոհունակությամբ հիշում, որ դեռևս 90-ականների սկզբներին Երևանի երկաթուղու համակարգում ամբողջապես լուծված է եղել աշխատակիցներին բնակարանով ապահովելու խնդիրը:

Համբարձում Ղանդիլյանին ճանաչեմք նաև նրա որդու՝ Կառլենի խոսքում. «Մեր ընտանիքը հայկական ավանդական ընտանիք էր, պայծառ օջախ, ինչպես Ղանդիլյանների մեր մեծ գերդաստանը, աղու-հացով, հյուրընկալ, նրանք բոլորը ոսկի մարդիկ էին՝ աշխատող, պարզ ու ազնիվ: Մեր հարկի տակ ժպիտն ու հումորն անպակաս էին: Հայրս հազվադեպ էր մենակ սեղան նստում, մեկ էլ՝ ձայն կտար, ընկերները կգային-կհավաքվեին, ու երեկոն տուն կդառնար: Հորս համար ընտանիքը մեծ արժեք էր: Նրա համար արժեք էր նաև իր խոսքը՝ նրա հա-նա էր, չեն՝ չէ, արժեք էին մարդկային շիտակ հարաբերությունները, արդարն ու ճիշտը, ընկերությունը՝ ընկերներից ոչ մեկին չմոռացավ. ես այն եմ տեսել հորիցս: Տեսել եմ իր գործին նրա նվիրումը, նրա պարտաճանաչությունը, մարդասիրությունը: Բարձր պաշտոնում էլ մինչև վերջ մնաց պարզ ու հասարակ մարդ, իր երկու զավակներին՝ ինձ ու քրոջս՝ Նարինեին, նույն ոգով դաստիարակելով: Իր մեծ զբաղվածության մեջ նա ժամանակ էր գտնում հետևելու, որ մենք ճիշտ մեծանանք, լավ



օրերին, երբ բեռնված վագոնները կենճանապարհին էին մնում, կարողանում էր անգամ աղբբեջանցիների հետ լեզու գտնել: Դա մեծ գործ էր, քանի որ այդ բեռները կենսական կարևոր նշանակություն ունեին՝ հացահատիկ, ալյուր, մագուլ... Ղանդիլյանի առջև փակ դուռ չկար, անլուծելի խնդիր չկար, խոսքը գործություն ու ուժ ուներ: «Ты железный человек». Նրան այսպես բնութագրել է ժամանակի տրանսպորտի մինիստրը: Ամենավերին ասյաններում մեծ հեղինակություն ուներ: Ազատախոս, արդարամիտ մարդ էր, անհաշտ էր կեղծիքի ու խաբեության հետ:

դաստիարակություն ստանանք: Նա երբեք մեզ չգերադասեց, հայրս ինձ բոլի մեջ է պահել, և էս ամենի համար ես անչափ շնորհակալ եմ նրան: Հպարտություն է այսպիսի հոր զավակ լինելը», - մեր գրույցը եզրափակում է Կառլեն Ղանդիլյանը:

Տպավորիչ է ու հիշարժան Հայկական երկաթուղու թանգարանի տնօրեն Նիկոլայ Գրիգորյանի վերհուշը: «2004 թվականին, որպես երկաթուղու բեռնային բաժնի աշխատակից, գործուղվեցի Մարատով՝ կազմակերպելու Լիսնի ծրագրով նախատեսված մեծաքանակ նավթային բիտումի փոխադրումը Հայաստան: Մեզ օրական հարկավոր



էր գուրջապատ պատյան ունեցող 5-6 վագոն, և այդ խնդրանքով ես դիմեցի կայարանապետին, որն էլ գրեթե անլուծելի խնդիրներ դրեց իմ առջև: Դիմեցի բեռնափոխադրումների բաժնի պետին: Վերջինս, լսելով, որ Հայաստանից եմ, ընդգծված հարգանքով ընդունեց ինձ և խորհուրդ տվեց դիմել ճանապարհային բաժնի պետին: Այս պաշտոնյան էլ նկատելի հարգանքով վերաբերվեց և բարեհաճորեն ինձ առաջնորդելով կայարանապետին արահներից մեկը, որի աջունակ կողմերում փակցված էին երկաթուղայինների լուսանկարներ, ինձ անակնկալ հարց տվեց. «Դուք այս մարդկանցից ո՞ւմ եք ճանաչում»: Ակնթարթաբար հիշեցի, որ Համբարձում Աղասիչը ժամանակին եղել է Մերձվուլգյան երկաթուղու Երշով և Աստրախան հանգույցների կայարանապետը, և հուզված ասացի՝ պետք է, որ այստեղ լինի իմ ուսուցիչ՝ Համբարձում Ղանդիլյանի լուսանկարը: «Դուք ճիշտ եք, - ասաց նա, - և իմացեք, որ նա նաև իմ, ինչպես և քիչ առաջ Ձեզ ընդունած բաժնի պետի ուսուցիչն է եղել»: Արդեն իսկ ակնհայտ էր, որ առանձնահատուկ վերաբերմունքը Հայաստանից եկածին անկասկածաբար պայմանավորված էր Ղանդիլյանի անձով ու հեղինակությամբ, և շատ տարիներ անց էլ մարդիկ խորին ակնածանքով ու հարգանքով էին հիշում նրան: Իմ գրուցակիցն այնուհետ անմիջապես զանգահարեց կայարանապետին և կարգադրեց տրանսպորտը ինչ որ հարկն է: Պատկերացրեք իմ ուրախությունը՝ ուսուցիչս նաև այն աշխարհից կարողացավ օգուտ տալ երկրին»:

Իսկ մեզ մնում է հիշել ու չմոռանալ՝ մեզանում այսպիսի մարդ է եղել:

Մասնակա Մարտիրոսյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵՏ ՀԱՄԱՏԵՂ

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության աշխատակիցները «Մարքեթինգը երկաթուղային տրանսպորտում» դասընթացի շրջանակներում վերապատրաստվում են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

- Ծրագիրը մշակված է հատուկ ՀԿԵ-ի համար և ներառում է
- «Մարքեթինգի կոնցեպցիան երկաթուղային տրանսպորտում»,
- «Մարքեթինգային հետազոտությունները տրանսպորտային շուկայում»,
- «Տրանսպորտային շուկայի հատվածավորումը»,
- «Դիվերսիֆիկացումը և դիֆերենցումը երկաթուղային տրանսպորտում»,
- «Մարքեթինգի համալիրի (ծրագրի) մշակումը»,
- «Մարքեթինգի կառավարումը երկաթուղային տրանսպորտում» թեմաները:

Նախագիծն իրականացվում է ՀԿԵ և ՀՊՏՀ միջև կնքված պայմանագրի շրջանակներում: Ընդհանուր առմամբ վերապատրաստում կանցնեն երկաթուղայինների հինգ խումբ, մասնակիցները կստանան հավաստագրեր:

ՀԿԵ-ում աշխատողների վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը հատուկ ուշադրություն է դարձվում: Երկաթուղայինները համապատասխան ուսուցում և վերապատրաստում են անցնում ինչպես Հայաստանի առաջատար համալսարաններում, այնպես էլ սեփական բազայում՝ Ճանապարհային ուսուցման կենտրոնում, որը հաջողությամբ գործում է 2010 թվականից:



ԱՄՓՈՓԵՑԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՇԱՄԱՐԵՑԻՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կայացել է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության 2-րդ համագումարը: Միջոցառման ընթացքում համագումարի մասնակիցները լսեցին ընկերության արհմիութենական կազմակերպությունների վերջին հինգ տարիների գործունեության հաշվետվությունը, ընտրեցին կազմակերպության նոր ղեկավար կազմը և նախանշեցին ապագա ծրագրերը:

Երկաթուղու շուրջ 3000 աշխատողների 98%-ը միավորող կազմակերպության նախագահ Ալբինա Մարտիրոսյանը ներկայացրեց վերջին 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքի հաշվետվությունը: Մասնավորապես, նա հայտնեց, որ հաշվետու ժամանակահատվածում տարբեր խնդիրների լուծմանն արհմիությունը հատկացրել է շուրջ 330 մլն դրամ: Այդ միջոցներով լուծվել են աշխատանքի պաշտպանության, աշխատողների բժշկական աջակցության, աշխատանքային պայմանների բարելավման, աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի կազմակերպման և ֆինանսավորման հարցերը, ինչպես նաև այլ խնդիրներ:

«Ընթացիկ տարվա 9 ամիսների ընթացքում ընկերությունում միջին աշխատավարձը կազմել է 240 հազար դրամ, ինչը 15 տոկոսով գերազանցում է 2019 թվականի ցուցանիշը և շատ ավելի բարձր է, քան նույն ցուցանիշը հանրապետությունում, - ասաց Ալբինա Մարտիրոսյանը: - Մինչև ժամանակ, տարվա ընթացքում աշխատողների արտադրողականությունն աճել է 20%-ով: Մեզ հաջողվեց նաև պահպանել մոբիլիզացված բոլոր աշխատողների աշխատավարձերը ընկերության միջին աշխատավարձի մակարդակի վրա: Պարզևստիման համակարգում վերջերս կատարված փոփոխություններն ուղղված էին աշխատողների մասնագիտական խրախուսմանն ու նոր կադրերի ներգրավմանը»:

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մեդնիկովը նշեց ընկերության ղեկավարության և արհմիութենական կազմակերպությունների համակարգված աշխատանքը աշխատողների համար հարմարավետ աշխատանքային պայմանների և աշխատանքային կյանքի ապահովման գործում: Նա Ա. Մարտիրոսյանի ելույթը լրացրեց հարցազրույցով և նշեց, որ աշխատողների անվտանգությունն ապահովելու, Նոտոնու-51 կմ հատվածում բեռնատար գնացքի երթևեկության ժամանակ ցուցաբերված զգոնության համար մեքենավար Ավետիք Սուքիասյանը և մեքենավարի օգնական Վրոյր Մարկոսյանը պարգևատրվել են 30 հազարական դրամի չափով:

«ԹԿՀ-020» քարշային սայլակի վերանորոգման գործում ակտիվ մասնակցության և արդյունավետ աշխատանքի համար 30 հազարական դրամի չափով պարգևատրվել են փականագործներ Արթուր Կոռնկյանը, Վարդան Տեր-Սարգսյանը, Արթուր Գրիգորյանը և Հովհաննես Բաղդասյանը, ինչպես նաև կոռնկավար Արթուր Սարգսյանը, խառատներ Մեդրակ Նիկողոսյանը և Արկադի Աղայանը, եռակցող Հրաչյա Սարգսյանը:

թը լրացրեց կադրերի պատրաստման ոլորտում նորություններով:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համատեղ մենք մշակել ենք երկաթուղային անձնակազմի պատրաստման ծրագիր: Այսպիսով, հաջորդ տարվանից Հայաստանում առաջին անգամ կսկսեն պատրաստել բարձրագույն կրթություն ունեցող երկաթուղայինների, ինչը էապես կլրացնի Գյումրու երկաթուղային քոլեջի աշխատանքը», - նշեց Ա. Մեդնիկովը:

Համագումարը միաձայն բավարար գնահատեց միության վերջին 5 տարիների աշխատանքը, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի պաշտոնում վերընտրեց Ալբինա Մարտիրոսյանին և ղեկավար կազմը:



ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ Գլխավոր տնօրենի հրամանով

- Գնացքների երթևեկության անվտանգությունն ապահովելու, ժամանակին միջոցներ ձեռնարկելու և Արարատ կայարանում շարժակազմի ռելսերից դուրս գալը կանխելու համար մեքենավար Բարիկ Օհանյանը և նրա օգնական Սաշա Բաղդասյանը պարգևատրվել են 30 հազարական դրամի չափով:

- Ցուցաբերված զգոնության, մասնկրային լոկոմոտիվի հրդեհումը մարելու ժամանակ ձեռնարկված միջոցների համար Կարմիր բլուր կայարանի հերթապահներ Օսիկ Նիկողոսյանը և Ռոբերտ Գևենյանը, կայարանի գլխավոր կոնդուկտոր Անուշավան

Պողոսյանը պարգևատրվել են 30 հազարական դրամի չափով:

- Գնացքների երթևեկության անվտանգությունն ապահովելու, Նոտոնու-51 կմ հատվածում բեռնատար գնացքի երթևեկության ժամանակ ցուցաբերված զգոնության համար մեքենավար Ավետիք Սուքիասյանը և մեքենավարի օգնական Վրոյր Մարկոսյանը պարգևատրվել են 30 հազարական դրամի չափով:

- ԹԿՀ-020» քարշային սայլակի վերանորոգման գործում ակտիվ մասնակցության և արդյունավետ աշխատանքի համար 30 հազարական դրամի չափով պարգևատրվել են փականագործներ Արթուր Կոռնկյանը, Վարդան Տեր-Սարգսյանը, Արթուր Գրիգորյանը և Հովհաննես Բաղդասյանը, ինչպես նաև կոռնկավար Արթուր Սարգսյանը, խառատներ

Մեդրակ Նիկողոսյանը և Արկադի Աղայանը, եռակցող Հրաչյա Սարգսյանը:

- Գյումրու կայարանում Գորգորբա գետի հունի մաքրման աշխատանքներին ակտիվ մասնակցության համար 30 հազարական դրամի չափով պարգևատրվել են՝ արտադրական սարքավորումների վարպետ Մովսես Մարտիրոսյանը, կոռնկի մեքենավարի օգնական Գարիկ Մխիթարյանը, տակելաժիկ Արտաշես Խալիֆյանը, քարշակի վարորդ Գագիկ Մանուկյանը, արհեստական կառույցների նորոգման վարպետ Հարություն Հարությունյանը, արհեստական կառույցների նորոգողներ Նելսոն Մադոյանը, Արտուշ Հովհաննիսյանը և Գագիկ Սարիբեկյանը, ինչպես նաև մեքենավարներ Իսրայել Բաղդասարյանը և Ալբերտ Դավաթյանը:



Ֆիդլետովո գյուղի դպրոցում նոր ուսումնական տարվա մեկնարկը նորից կրկնակի տոն էր «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության շնորհիվ:

Երկարամյա ավանդույթի համաձայն, որին չկարողացավ խանգարել հանրապետությունում համաճարակաբանական իրավիճակը, ընկերությունն ավարտեց վերանորոգման աշխատանքների հերթական փուլը՝ վերանորոգվեցին դպրոց տանող ճանապարհները և զուգարանի սենյակները: Երկաթուղին նաև հեռուստացույց նվիրեց ուսումնական հաստատությանը, իսկ գրադարանային ֆոնդը համալրվեց նոր դասագրքերի հերթական խմբաքանակով:

Առաջին գանգի տոնական միջոցառման ժամանակ աշակերտներին և ուսուցիչներին շնորհավորելով՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մեդնիկովը ուսման մեջ նորանոր հաջողություններ և համբերություն մաղթեց նրանց:

գուցե նույնիսկ կնախանձեք ձեզ, քանի որ դուք նոր հետաքրքիր աշխարհ եք բացահայտում», - ասաց Ընկերության ղեկավարը:

Հարավկովկասյան երկաթուղին առաջին անգամ չէ, որ աջակցություն է ցուցաբերում Ֆիդլետովոյի դպրոցին: Ընկերությունն արդեն աջակցել էր դպրոցի վերանորոգման աշխատանքների իրականացման և ինտերակտիվ ուսուցման դասարանի կահավորման գործին, բազմիցս դասագրքեր էր նվիրել դպրոցի գրադարանին, վերանորոգել դպրոցի տանիքը, դասասենյակները, մարզահալիճը, որը չէր շահագործվում 1988 թվականի երկրաշարժից հետո, ինչպես նաև վերականգնեց ջեռուցման համակարգը, կոսմետիկ վերանորոգեց դպրոցի երկու մասնաշենքերը, հիմնովին վերանորոգել էր և անհրաժեշտ տեխնիկա տրամադրել աշխատանքային ուսուցանման դասասենյակի համար:

Իսկ անցյալ տարի երկաթուղայինները դպրոցին նվիրեցին անհրաժեշտ ատոլիոն և համակարգ-

ՏՈՆԱԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ

«Երեխաներ, դուք ձեր կյանքի նոր փուլ եք մտնում: Հետաքրքիր, հուզիչ, նոր գաղափարներով և գիտելիքներով լի մի փուլ, որտեղ նոր ընկերներ կգտնեք, ինչ-որ մեկը հստակ կկոդմորոշվի ապագա մասնագիտության հարցում: Եվ մենք՝ մեծահասակներս, կհետևենք ձեզ, կօգնենք և կուղղորդենք, որքան կարող ենք, գուցե նույնիսկ կնախանձեք ձեզ, քանի որ դուք նոր հետաքրքիր աշխարհ եք բացահայտում», - ասաց Ընկերության ղեկավարը:

չային տեխնիկա, նոր դպրոցական սեղաններ տարրական դասարանների համար:

Առանց ուշադրության չեն մնացել և Սանահին կայարանում գտնվող Ավազուրի քաղաքի N3 մանկապարտեզի սաները:

ավարտվեց շենքի երկրորդ հարկի կոսմետիկ վերանորոգումը, փոխվեցին լուսամուտները:

Նախորդ տարիներին Ընկերությունը՝ այդ թվում այլ բարերարների հետ համատեղ, կապիտալ վերանորոգել էր մանկապարտեզի գլխավոր ու երկրորդ մասնաշենքերը, տանիքները, պատրաստել մանկական կահույք, տեղադրել ջեռուցման համակարգ, վերականգնել մանկական խաղահրապարակի տաղավարներ, աստիճաններ: Իսկ 2018 թվականին վերանորոգվել, անհրաժեշտ կահույքով, ջեռուցման համակարգով և կենցաղային տեխնիկայով հագեցվել էր մանկապարտեզի նոր մասնաշենքը:

Այս տարվա ընթացքում երկաթուղին նախատեսում է նաև կառուցել և կահավորել մանկական խաղահրապարակ Վահագնաձոր գյուղում, որտեղ գտնվում է Շահալի երկաթուղային կայարանը:

2008-2019 թթ. բարեգործական ծրագրերի ֆինանսավորմանն ուղղվել է 368 մլն դրամ: Ընթացիկ տարում նման ծրագրերի իրականացմանը նախատեսվում է ուղղել 29 մլն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՂԱՅԻՆ
ՆԿԵ ՓԲԸ-ի
կորպորատիվ թերթ

Խմբագրության հասցեն
ԳՅ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50
Ֆեռ: +374 10 57 50 02
Էլ. փոստ՝ pr@railway.am, ukzhpressoffice@inbox.ru
Լուսանկարները՝ Գաղութում և ազգային

Խմբագրական խորհուրդ
Գլխավոր պատասխանատու
Ռուբեն Գրծելյան

Օավակը՝ 2 տպագրական մամուլ
Ստորագրված է տպագրության՝ 25.12.2020
Տպաքանակը՝ 1000 օրինակ
Տպագրված է «Կոլլաժ» ՄԴԽ հրատարակչությունում

АРМЕНИИ

Железнодорожник

Газета ЗАО ЮКЖД СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ, 2020 г.

#3 (68)

ДОРОГИЕ КОЛЛЕГИ- ЖЕЛЕЗНОДОРОЖНИКИ И ВЕТЕРАНЫ!

Уходящий 2020 год был сложным для железной дороги и в целом для Армении. В уходящем го-

ду республика была вынуждена противостоять не только пандемии коронавируса, с которой столкнулся весь мир, экономическими трудностями, но и участвовать в новой Арцахской войне. Все это стало большим испытанием как для армянского народа, который отдал все силы и возможности – материальные, физические, моральные – так и для железнодорожников, которые, как всегда не остались в стороне. Наши сотрудники уходили на передовую, собирали гуманитарную и материальную помощь, всеми способами оказывали поддержку нуждающимся.

Этот год, к сожалению, стал годом потерь. Некоторые из них невосполнимы, но эти утраты необходимо пережить и двигаться дальше: работать над развитием железнодорожной инфраструктуры и страны в целом. Для этого нам потребуется единство, общая работа на благо Армении. Уверен, что большая и сплоченная семья железнодорожников не останется в стороне и внесет свой весомый вклад в наши будущие победы и достижения.

2021 год будет годом упорной и тяжелой работы, но только эта работа станет дорогой к успеху.

Искренне желаю Вам и вашим семьям счастья, здоровья, радости в новом году! Пусть 2021 год станет временем достижений и новых свершений, успеха, благополучия и процветания.



С уважением, Генеральный директор ЗАО «ЮКЖД» А.В.Мельников

ПРОФЕССИИ НАШИ ЖЕЛЕЗНАЯ ДОРОГА ПОКОРЯЕТСЯ ЖЕЛЕЗНОЙ ВОЛЕ

Перрон Ереванского железнодорожного вокзала. Минута в минуту на станцию прибыл пригородный электропоезд (ЭП2Д), курсирующий по маршруту Ереван-Гюмри-Ереван. С его прибытием пассажиры постепенно выстраиваются в очередь, чтобы проводник измерил температуру перед посадкой в вагон. Ведь карантин не отменяли, а значит меры предосторожности должны строго соблюдаться. Подобная дисциплинированность и пунктуальность граждан, признаться, приятно удивили. В голове промелькнуло: видимо, на железной дороге иначе не бывает.

Так как по расписанию электропоезд должен был тронуться со станции в 14:25, у нас было время, чтобы лично познакомиться с человеком, который вот уже 40 лет работает машинистом на железной дороге. Мне казалось, что человек, управляющий электропоездом на протяжении такого длительного времени, должен выглядеть, как минимум утомленным будничной рутинной. Но машинист пассажирского электропоезда «Южно-Кавказской железной дороги» (ЮКЖД) Ашот Саркисян встретил нас с улыбкой, выглядел довольно бодро, а его трудовому настрою можно было только позавидовать. «На железную дорогу я попал совершенно случайно, а остался надолго», – начинает он знакомство с шутки.

Продолжение на стр. 2



В ПАМЯТЬ ОБ АМБАРЦУМЕ КАНДИЛЯНЕ

